Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 9 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի համար նոր միջնակարգ դպրոցի կառուցում» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի միջնակարգ հանրակրթական դպրոցների համակարգչային դասարանների կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի հայորդաց տան շքամուտքերի կառուցում», «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու մատուռ խորանի կառուցում» և «Հանդիսությունների հարթակի կառուցում» ծրագրերը.

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Վանաձոր քաղաքում իրականցվող «Օրրան-Կրիկորյան» ցերեկային խնամքի կենտրոնի կառուցում» ծրագիրը.

«Վորլդ Վիժն Ինտերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգման համար», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի մանկապարտեզում ջեռուցման համակարգի տեղադրում» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքում ցերեկային կենտրոնի վերանորոգում» ծրագրերը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: